ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1 հունիսի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր անդրանիկ այցը կատարեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամադ Ֆարհադ Քոլեյնին՝ Հայաստանում Իրանի մշակույթի կենտրոնի տնօրեն Աբու Թալեբիի և դեսպանատան մշակույթի կցորդ Մահմուդ Ասֆարի ընկերակցությամբ:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն Քոլեյնիին նոր նշանակման առիթով, իր համոզմունքը հայտնեց, որ պրն դեսպանն անցնող տարիների իր փորձառությամբ նոր թափ կհաղորդի երկու հարևան և բարեկամ ժողովուրդների փոխհարաբերություններին: Նորին Սրբությունը, հանուն երկու երկրների անսասան բարեկամության, իր զորակցությունը հայտնեց Իրանի դեսպանին՝ մաղթելով նրան աշխույժ և բեղուն գործունեություն:

Պրն դեսպանը մեծապես գնահատեց Հայոց Կաթողիկոսի դերակատարությունը ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ազգային գաղափարախոսության պահպանման գործում: Պրն Քոլեյնին վստահեցրեց, որ իր բոլոր ջանքերն ուղղելու է Հայաստան-Իրան հետագա մերձեցմանը՝ համոզմամբ, որ բոլոր խնդիրների լուծման ուղին սիրո և փոխըմբռնման ճանապարհն է: Անդրադառնալով Երևանում վերակառուցված Կապույտ մզկիթին, Իրանի դեսպանը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր օրհնաբեր այցը կատարելու հոգևոր այս կենտրոն:

Հանդիպման ավարտին պրն դեսպանը Վեհափառ Հայրապետին հանձնեց հատուկ Նորին Սրբության համար գործված նրբագեղ մի գորգ՝ Հիսուս Քրիստոսի պատկերով: